ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշտիի 1

№ 4289-Ա « 20 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՌԻԳԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանի 20.10.2025 թվականի թիվ Ն/62173-25 զեկուցագիրը և Հայաստանի Հանրապետությունում Լատվիայի Հանրապետության պատվավոր հյուպատոս Արմեն Ղասաբողլյանի 10.10.2025 թվականի թիվ Ե-25/165 գրությունը՝ Երևան և Ռիգա քաղաքների միջև գործընկերության ընդլայնման հարցերը քննարկելու և Ռիգայի քաղաքային տնտեսության կառավարման ոլորտներում իրականացված բարեփոխումների հաջող փորձին ծանոթանալու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2025 թվականի նոյեմբերի 19-ից 22-ը ներառյալ գործուղել Լատվիայի Հանրապետության մայրաքաղաք Ռիգա հետևյալ կազմով.

Արմեն Փամբուխչյան Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Գեղամ Բրսոյան Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի օգնական
Խաչիկ Մկրտչյան Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության լուսանկարիչ

2.Ընդունել ի գիտություն, որ Արմեն Փամբուխչյանի գործուղման ծախսերի փոխհատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի համաձայն:

3.Ընդունել ի գիտություն, որ Գեղամ Բրսոյանի և Խաչիկ Մկրտչյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

4. Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանի բացակայության ընթացքում Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի պարտականությունների կատարումը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանին:

5.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ